ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է «Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» նոր սպորտային համալիրի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 գնման պայմանագրում 2021 թվականի հունիսի 2-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 25.03.2021թ N397-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
29.12.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 գնման պայմանագրի

ք. Երևան «02» «06» 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Գ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.03.2021թ. N 397-Ն որոշումը և «Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» նոր սպորտային համալիրի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 29.12.2020թ. կնքված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել 2021 թվականի աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը՝ համաձայն Համաձայնագրի N1 հավելվածի:

1.2 Պայմանագիրը լրացնել նոր հավելված N3-ով՝ համաձայն Համաձայնագրի N2 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի հավելվածներ N1-ը և N2-ը բաղկացած են մեկական էջերից և համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011037307
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«Գրիգորյան Շին» ՍՊԸ
ք. Երևան, Էրեբունի, Մուշական 8 փ., 92 տ.
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150014101961942
ՀՎՀՀ 00481595

Տնօրեն՝

_____ Գ. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ
«ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ»
"ГРИГОРЯН ШИН"
"GRIGORYAN SHIN"
00481595

Հավելված N1
29.12.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 գնման պայմանագրի
«_02_» «_06_» 2021թ. *կնքված N 1 համաձայնագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

«Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» նոր սպորտային համալիրի կառուցման աշխատանքների իրականացման 2021թ. հատկացված գումարների շրջանակում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ

Կատարման ենթակա աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ

N	Գումար	Կատարվելիք աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը
1	200 000 000	Ոչ ուշ քան 90-րդ օրացուցային օր
2	487 329 430	Ոչ ուշ քան 180-րդ օրացուցային օր
	487 329 430	**180 օրացուցային օր**

*** Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությանն առնչվող բոլոր փոփոխություններն անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011037307
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«Գրիգորյան Շին» ՍՊԸ
ք. Երևան, Էրեբունի, Մուշական 8 փ., 92 տ.
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150014101961942
ՀՎՀՀ 00481595

Տնօրեն՝

_____ Գ. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N2
29.12.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 գնման պայմանագրի
«02» «06» 2021թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N3
29.12.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հերթով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211131/504	«Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» նոր սպորտային համալիրի կառուցման աշխատանքներ	-	-	-	-	-	97 465 886	200 000 000	200 000 000	200 000 000	487 329 430	487 329 430	487 329 430	487 329 430

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011037307
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«Գրիգորյան Շին» ՍՊԸ
ք. Երևան, Էրեբունի, Մուշական 8 փ., 92 տ.
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150014101961942
ՀՎՀՀ 00481595

Տնօրեն՝

Գ. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ՔԱՆԱՔԵՌ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ “КАНАКЕР”
“ARMBUSINESSBANK” CJSC
“QANAQER” BRANCH

N 32-384
«27» մայիսի 2021

Բենեֆիցիար՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
Պրինցիպալ՝ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ ՍՊԸ

ԵՐԱՇԽԻՔ N E21-000714
(կանխավճարի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 պայմանագրի կանխավճարից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 150.000.000 /Մեկ հարյուր հիսուն միլիոն/ ՀՀ դրամ գումարի (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է մինչև **31-ը մայիսի 2022թ.**:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավագի 72/9; Հեռախոս՝ (+37460) 37 25 32; Էլ.փոստ՝ qanaqer@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: З.Саркаваг 72/9, г. Ереван, РА; Телефон: (+37460) 37 25 32; Эл.почта: qanaqer@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 72/9 Z. Sarkavag, Yerevan, Armenia; Telephone: (+37460) 37 25 32; E-mail: qanaqer@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կառավարիչ Հայկ Պետրոսյան

ՀՍԳ հաշվապետ Լարիսա Մակարյան

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ՔԱՆԱՔԵՌ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ “КАНАКЕР”
“ARMBUSINESSBANK” CJSC
“QANAQER” BRANCH

N 32-383
«27» Դեկտեմբեր 2021

Բենեֆիցիար՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
Պրինցիպալ՝ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ ՍՊԸ

ԵՐԱՇԽԻՔ N E21-000712
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 48,732,945 /Քառասունութ միլիոն յոթ հարյուր երեսուներկու հազար ինը հարյուր քառասունհինգ/ ՀՀ դրամ գումարի (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվող N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 15-ը մարտի 2026թ.:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավագի 72/9; Հեռախոս՝ (+37460) 37 25 32; Էլ.փոստ՝ qanaqer@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: З.Саркаваг 72/9, г. Ереван, РА; Телефон: (+37460) 37 25 32; Эл.почта: qanaqer@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 72/9 Z. Sarkavag, Yerevan, Armenia; Telephone: (+37460) 37 25 32; E-mail: qanaqer@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կառավարիչ՝ Հայկ Պետրոսյան

ՀՍԳԳ Բաժնի պետ՝ Լարիսա Մակարյան

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ՔԱՆԱՔԵՌ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ “КАНАКЕР”
“ARMBUSINESSBANK” CJSC
“QANAQER” BRANCH

N 32-382
«27» Դեկտեմբեր 2021

Բենեֆիցիար՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
Պրինցիպալ՝ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ ՍՊԸ

ԵՐԱՇԽԻՔ N E21-000713
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 146,198,830 /Մեկ հարյուր քառասունվեց միլիոն հարյուր իննսունութ հազար ութ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ գումարի (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 15-ը մարտի 2025թ.:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավագի 72/9; Հեռախոս՝ (+37460) 37 25 32; Էլ.փոստ՝ qanaqer@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: З.Саркавраг 72/9, г. Ереван, РА; Телефон: (+37460) 37 25 32; Эл.почта: qanaqer@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 72/9 Z. Sarkavag, Yerevan, Armenia; Telephone: (+37460) 37 25 32; E-mail: qanaqer@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կառավարիչ Հայկ Պետրոսյան

ՀՄՊԳ Բաժնի պետ Լարիսա Մակարյան